

**ԲԱՌԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ԶԳԱՅԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ**

ԷԴՈՒԱՐԴ ԱՆԱԿԵՐԴՅԱՆ

Հայտնի է, որ յուրաքանչյուր բառ, լեզվական ամեն մի միավոր ունի որոշակի իմաստ, նշանակություն և վերաբերում է որոշակի խոմբ առարկաների: Լեզվական միավորների և առարկաների հնարավոր կապի ու առնչության պրոբլեմի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք միմյանց հետ ամենից առաջ կապված են վերաբերական կապով: Բառի և առարկաների միջև գոյություն ունեցող կապերի լուսաբանումն անհրաժեշտաբար ենթադրում է նաև ուսուցման և ճանաչողության վերլուծություն, որովհետև լեզվական ցանկացած միավոր, որպես նյութական-իրեալական գոյակցություն, նախ իր մեջ զուգակցում է օբյեկտիվ իրականության իրերի ու առարկաների արտացոլման, նշանակման, շնվանման հատկություն: Երկրորդ իրականացում է հաղորդակցման (կոմունիկացիայի՝ որպես հասարակության անդամների, Կ. Մարքսի խոսքերով ասած, «հասարակական խնդիրների») փոխազդեցության, փոխներգործության (ուսուցման) ֆունկցիա: Լեզվական գործունեությունը «...այնպիսի գործունեություն է, որը մի կողմից իմացական է, այսինքն՝ կոչված է լեզվի միջոցով ապառարկայացնելու իրականությունը (քանի որ իմացություն ասելով հասկանում ենք անհատի գիտելիքների և կարողությունների շրջանակների լայնացում) կամ ուղղված է, դարձյալ լեզվի միջոցով, հասարակական պրակտիկայի ընթացքում առաջ քաշված խնդիրների լուծմանը (քանի որ նկատի ենք ունենում հասարակության գիտելիքների ֆոնդի և կարողությունների ընդլայնում) ամբողջությամբ վերցրած. մյուս կողմից՝ հաղորդակցման, կոմունիկատիվ գործունեություն է»¹:

Լեզվի և լեզվական միավորների բովանդակության յուրացումը հիմնականում կարող է իրականանալ երկու եղանակով. առաջինը՝ արտասանման-ցուցադրման, երկրորդը՝ խոսքամտային: Առաջին եղանակն այն է, երբ դիդակտիկորեն ցուցադրվում է զգայորեն ընկալելի որևէ առարկա, որը սխաժամանակ ուղեկցվում է տվյալ առարկան նշանակող բառի արտասանությամբ: Այս դեպքում առկա է ոչ թե էության իմացման, այլ զուտ զգայական արտացոլման, ճանաչողության օբյեկտը ֆիքսելու պահը: Այսպես՝ եթե երեխային ցույց ենք տալիս որևէ կոնաձև առարկա և միաժամանակ արտասանում համապատասխան բառը, ապա նրա մոտ, ամենից առաջ, տպավորվում է այդ առարկայի զգայական, նյութական, արտաքին կողմը, իսկ դրա էությունը մնում է չբացահայտված: Իրավացի է Վ. Ստեպանի, երբ գրում է. «Իմացությունը սկսվում է ոչ միայն մարդու հայեցողության մեջ տրված օբյեկտի արտացոլումից, այլև հասարակական պրակտիկայում ներառված օբյեկտի արտացոլումից»²: Արտասանման-ցուցադրման եղանակով բառի բովանդակության յուրացման ժամանակ տվյալ բառով նշանակված առարկան, մեր կարծիքով, դեռևս չի ընդգրկված հասարակական պրակտիկայի մեջ, թեև առկա է դրա պոտենցիալ հնարավորությունը: Այլ կերպ ասած, եթե տվյալ առարկայի ցուցադրումը և միաժամանակ այդ առարկան նշանակող բառի արտասանությունը կատարվում են առաջին անգամ, ապա քիչ հավանական է, որ տվյալ գործողության արդյունքը նշանակալից լինի բա-

¹ А. А. Леонтьев, Речевая деятельность («Основные теории речевой деятельности», М., 1974, с. 21—28).


² В. С. Степан, Научное познание как «опережающее отражение» практики («Практика и познание», М., 1973, с. 206).

վարար նախադրյալ կարող է հանդիսանալ ոչ անմիջական ցուցադրման եղանակով բառի բովանդակության, հետևաբար և տվյալ բառով նշանակված առարկայի էության ճանաչման համար: Վերահիշյալ նախադրյալն անհրաժեշտ և բավարար կարող է լինել այն դեպքում միայն, երբ պրոցեսը մի քանի անգամ կրկնվել է, լայնացել են սուբյեկտի փորձի շրջանակները, ձեռք են բերվել որոշ գիտելիքներ: Այդպիսով զգայական տվյալների և արդեն ձեռք բերված տարրական գիտելիքների գործադրման շնորհիվ հնարավորություն է ստեղծվում անցում կատարել բառի բովանդակության՝ այդ բառով նշանակված առարկայի յուրացմանն ու ճանաչմանը: Այս դեպքում դարձյալ սուբյեկտը ազատ չէ զգայականի պահից, նա զգայական պատկերներից, փաստերից հարաբերականորեն ազատ է և ոչ զգայական էություններով գործողություններ է կատարում այն ժամանակ, երբ առնչվում է խոսքալեզվական գործունեության հետ, այսինքն՝ իրականությունը ճանաչում է երկրորդ եղանակով՝ խոսքամտային համակարգի շնորհիվ: Այս մակարդակում սուբյեկտը բառի բովանդակությունը և դրանով նշանակված առարկան յուրացնում, ճանաչում է խոսքամտային միջոցներով: Լեզվի և լեզվական միավորների բովանդակության յուրացման առաջին եղանակը օգտագործվում է ոչ միայն երեխայի, որը դեռևս լիարժեք չի տիրապետում օբյեկտիվ իրականության իրերի ու առարկաների միջև եղած կապերն ու հարաբերությունները միջնորդավորված ձևով բացահայտելու սկզբունքին, այլև՝ հասուն մարդկանց օտար լեզուների ուսուցման ընթացքում, երբ բացառված է թարգմանչի կամ բառարանի օգտագործման հնարավորությունը: Այս պայմաններում բառի բնորոշումն անհրաժեշտաբար ենթադրում է նոր բառերի օգտագործում, որոնց բնորոշման համար ևս հարկավոր են նոր բառեր և այսպես շարունակ: Գերմաներեն չիմացող մարդու համար das Haus (տուն) բառի և դրանով նշանակված օբյեկտի ընկալումը, ճանաչումը (եթե չի կիրառվում ցուցադրման-արտասանման եղանակը) պահանջում է պատ, տաճիք, ֆենլու վայր, ապաստարան և այլ բառերի օգտագործում, որոնք, իրենց հերթին, պահանջում են լեզվական բնորոշում: Այսպես, das Haus (տուն) բառի իմաստն ու նշանակությունը, դրանով նշանակված առարկայի ընկալումն ու յուրացումը պահանջում է նոր B, C, D բառերի օգտագործում, սրանք էլ, իրենց հերթին, ավելի նոր՝ b₁, b₂, b₃, C₁, C₂, C₃, d₁, d₂, d₃ բառերի, վերջիններս էլ՝ ուրիշների և այսպես շարունակ: Այստեղից դժվար չէ ենթադրել, որ միմյանց լեզուն չհասկացող անձանց մոտ բավարար մակարդակի հաղորդակցում լինել չի կարող, որովհետև տվյալ բառը նրանց չի հղի համապատասխան առարկային, չի արթնացնի այդ բառով նշանակված առարկայի պատկերը, դադափարը: «...անծանոթ բառը դա այն բառն է,— գրում է Ա. Զիկոբավան,— որի մասին մենք չգիտենք, թե որ նշանակվողին է այն վերաբերվում»³: Այս դեպքում ընկալողի համար, ըստ երևույթին, կարևորը տվյալ բառի նյութական կողմի՝ հնչյունների լսողական, տառերի տեսողական պատկերներն են, որովհետև բառի նյութական կողմի և տվյալ բառով նշանակված առարկայի կապի իրականացնողը՝ բառի նշանակությունը, նրա համար դեռևս ընկալելի և ըմբռնելի չէ: Բառի նյութական կողմը, անտարակույս, կարևոր նշանակություն ունի նորմալ հաղորդակցման, հետևաբար և տվյալ բառի նշանակության ընկալման համար: Սակայն բառն անարգել մտնում է ասույթների ձևավորման միջոցների շտեմարանն այն դեպքում միայն, երբ իրականանում է տվյալ հնչյունախմբի և որոշակի նշանակություն (որպես լեզվական մատերիայի և օբյեկտիվ իրականության առարկաների կապի իրականացման միջոց) հոգեբանական կապի պրոցեսը⁴: Այնպես որ, լեզվի նշանների՝ հնչյունների, տառերի և իրականության առարկաների հարաբերությունն անհրաժեշտաբար ենթադրում է ինչպես տվյալ լեզվի օրենքների օգ-

³ А. С. Чикобава, К вопросу о взаимоотношении мышления и речи в связи и ролью коммуникативной функции («Язык и мышление», М., 1967, с. 21).

⁴ А. А. Уфимцева, Лексическая номинация («Языковая номинация», М., 1977, с. 13).

տագործում, այնպես էլ տվյալ առարկաների կամ դրանց դասի համապատասխան պատկերների առկայություն: Մի խոսքով, արտահայտվող բառի և համապատասխան առարկայի միջև առկա հարաբերության բացահայտման համար տվյալ բառի նյութական կողմի ընկալումն անհրաժեշտ է, բայց դեռևս բավարար չէ նրա լիարժեք յուրացման և բառի ետևը «թաքնված» առարկան, իրը, պրոցեսը ճանաչելու համար:



Այն դեպքում, երբ մարդկային մտածողությունն իրականացնող նշանային համակարգի տարրերի նշանակությունը ցանկանում ենք մեկնաբանել ոչ թե իրականության իրերի և առարկաների անմիջական մասնակցությամբ, այսինքն՝ արտասանման-ցուցադրման, այլ այդ նույն սխեմայի՝ խոսքամտային ընկալման կամ բնորոշման եղանակով, ապա լեզվական այդպիսի գործունեությունը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայով: Եթե բառային այս շղթան անընդհատ շարունակենք, ապա կթվա, թե բառի նշանակության և համապատասխան առարկայի ընկալման՝ ճանաչման ուղղությամբ բավարար արդյունքի հասնել չենք կարող: Որպեսզի այս թվացողության պահը հաղթահարվի, անհրաժեշտ է մի ինչ-որ տեղ «կտրել» շղթան և տվյալ բառի իմաստը բացատրել ցուցադրման-արտասանման եղանակով: Հակառակ դեպքում կհանգենք այն տեսակետին,

չստ որի բառի նշանակությունը պայմանավորված է այլ բառերով և նրա իդեալական կողմը ոչ մի առնչություն չունի իրականության հետ. տեսակետ, որն ընդունելի չէ մարքսիստական փիլիսոփայության համար: Բառային նշանների քերականական ասպեկտի բացարձակացումը և լեզվի մեկնաբանումը որպես անփոփոխ ու մեկուսացված համակարգ, որտեղ բառի նշանակությունը դարձյալ որոշվում է բառերով, նշում է Ս. Օպարան, լեզվի իդեալիստական տեսության բնորոշ առանձնահատկություններից մեկն է⁵, տեսություն, որը մերժում է բառերի ինչպես առարկայական վերաբերության, այնպես էլ արտացոլման սկզբունքը: Այնպես որ լեզվական պրակտիկայում բառի նշանակության և դրան համապատասխան առարկայի ընկալման համար կարևոր նշանակություն ունի ինչպես առարկայի և նրա հասկացական ու զգայական պատկերների առկայությունը, այնպես էլ բառն առարկային, հետևաբար՝ առարկաների դասին հարադրելու պահը: Երբ ընկալողին երկրորդ անգամ է ցույց տրվում առարկան և միաժամանակ արտա անվում է համապատասխան բառը, ապա ընկալողի համար ցուցադրվող առարկան որոշ չափով, ոչ էականորեն տարբերվում է նախկինից: Այս դեպքում դրսևորվում են հետևյալ բնույթի օրինաչափություններ.

ա) ընկալողի մոտ, ինչպես և նախկին փորձի ժամանակ կարող են առաջանալ մի ամբողջ խումբ զգայություններ՝ լսողական, տեսողական, շոշափելիքի և այլն: Ընդ որում, լսողական և տեսողական պատկերներն ավելի ընդգծված են դրսևորվում, իսկ մյուս բնույթի զգայությունները կարող են և չառաջանալ կամ հանդես գալ ավելի աղոտ ձևով: բ) Ամենից առաջ պայմանական կապ է

⁵ С. Опора, Язык и идеализм («Ученые социалистических стран в борьбе с буржуазной философией и социологией», М., 1976, с. 90).

ստեղծվում լսողական և տեսողական զգայությունների միջև: գ) Ընկալողը համեմատության մեջ է դնում նախկին փորձի ժամանակ և նոր առաջացած զգայական պատկերները, դրանով իսկ կապ է ստեղծվում ոչ միայն հիշյալ պատկերների, այլև նախկին և ներկա «բառ-առարկա» օբյեկտների միջև: Այլ կերպ ասած, ցուցադրման-արտասանման ընթացքում մարդու մոտ առաջանում են տվյալ բառի և նրանով նշանակված առարկայի պատկերները: Այնուհետև ընկալողի հիշողության մեջ վերարտադրվում են նախկին փորձի ժամանակ առաջացած լսողական և տեսողական պատկերները (բացառված չէ նաև այլ տեսակի զգայությունների վերարտադրությունը), որոնք էլ մարդուն հղում են դեպի նախկին առարկան: Առաջին հայացքից կարող է թվալ, թե հղումը նախկին առարկային իրականացվում է զգայական պատկերների միջոցով միայն: Մեր համոզմամբ, այդ պրոցեսն իրականացնող գործոնները կազմում են, մի կողմից, նախկին պատկերները, մյուս կողմից՝ մարդու զգայական օբյեկտների վրա անմիջականորեն ազդող առարկան և համապատասխան բառը, որովհետև վերջիններս ու դրանց տեսողական, լսողական պատկերները տարրորշված չեն, հանդես են դալիս միաձուլյ, միաժամանակ դրանք մարդու գործունեությունը հղում են է՝ իրենց, այսինքն՝ զգայական օբյեկտների վրա անմիջականորեն ազդող բառ—առարկա կոմպլեքս ազդակին, և՛ նախկին փորձի ժամանակ համապատասխան բառի հետ կապակցված առարկային ու նրա զգայական պատկերներին:

Երբ բառն արտասանվել է, իսկ առարկան չի ցուցադրվել, ընկալողի մոտ բառ-ազդակի և դրան համապատասխան առարկայի միջև պայմանական կապ ստեղծվում է տվյալ բառի հետևանքով առաջացած լսողական պատկերի և նախկին փորձի ժամանակ առաջացած խոսքայնացված պատկերների շնորհիվ: Այսինքն՝ տվյալ գործունեության ընթացքում առաջացած պատկերները կապվում են ցուցադրման-արտասանման հետևանքով առաջացած այն պատկերների հետ, որոնք ստացել են, ասենք, բարձրի, երկարի, երկու կողմերով կազմված լինելու, կարմրի և այլնի անունները: Մեր համոզմամբ Ա. Վետրովի այն եզրակացությունը, թե «բառերի իմաստային նշանակությունը (նշանակությունը ընդհանրապես—է. Ա.) ոչ թե հասկացություններ են, այլ ընդհանուր և եզակի մտապատկերներ՝ առարկայի հայեցողական-զգայական պատկերներ...»⁷, ընդունելի է մարդու ճանաչողական գործունեության քննվող մակարդակում միայն: Այսինքն, երբ մղումը դեպի որոնվող առարկան իրականանում է զգայական, բայց արդեն բառայնացված՝ անվանակոչված պատկերների շնորհիվ: Հիշյալ բնույթի պատկերները, տվյալ գործունեության շրջանակներում, ընկալողի համար կարող են հանդես դալ որպես տվյալ բառի նշանակություն կամ ուղղակի փոխարինել դրանց: Այս դեպքում, ինչպես ասացինք, իմացության օբյեկտին համապատասխանող բառը և առարկայի արտաքին, զգայական պատկերը, տեսքը, առանձին հատկությունները սուբյեկտի նախկին փորձի, առարկայական-զգայական գործունեության ընթացքում բազմիցս զուգակցվում, զուգորդվում են: Հենց նաև զուգորդվածության պատճառով էլ այս կամ այն առարկայի բառային արտահայտությունն առաջացնում է համապատասխան առարկայի զգայական պատկերը: «Սա եռանկյունի է» բառային արտահայտությունը առաջ

6 Ի. Ս. Բերիտաշվիլին իր «Об образной психонервной деятельности» (М., 1966) աշխատության մեջ զարգացնում է այն տեսակետը, որի համաձայն բարձրակարգ կենդանիների մոտ պայմանական ռեֆլեքսների մշակման ժամանակ կենդանու ուղեղում առաջանում է որոշակի նեյրոֆիզիոլոգիական գոյացում, որն էլ կենդանուն մղում է դեպի առարկան: Մարդու ճանաչողական կարողությունների տարբեր մակարդակներում Բերիտաշվիլու առաջ բաշած նեյրոֆիզիոլոգիական գոյացումը փոխվում է: Արտասանման-ցուցադրման եղանակով առարկայի և նրա համապատասխան բառի ճանաչման ժամանակ մարդու միտքը, նրա գործունեությունը առարկային մղվում է նաև խոսքայնացված զգայական պատկերների միջոցով, որոնք էլ հանդիսանում են մարդու և կենդանու գործունեության հիմնական տարբերակիչներից մեկը:

7 А. А. Ветров. Семиотика и ее основные проблемы, М., 1968, с. 134.

է բերում նաև նախկին փորձի ժամանակ հանդիպած եռանկյունու զգայական պատկերը: Երբ ցուցադրվում է առարկան, բայց չի արտասանվում համապատասխան բառը, մարդու հիշողության մեջ արթնանում է տվյալ առարկայի ընդհանուր՝ եռանկյունի կամ առանձին հատկությունների՝ կողմ, անկյուն և այլն բառ-նշանը: Այսինքն՝ մարդու հիշողության մեջ արթնանում է այն փաստը, որ լեզվի մեջ տվյալ պատկերին համապատասխանում է «եռանկյունի» բառը, իսկ նրա առանձին մասերին՝ «կողմ», «անկյուն» և այլ բառեր: Անդրադառնալով լեզվական գործունեության պրոցեսում բառային հրամանների հետևանքով առաջացող ռեակցիաների կառուցվածքին և դրանք պայմանավորող մեխանիզմների բնույթին, Ե. Բոյկոն հանգում է քննվող հարցի պարզաբանման համար կարևոր մի շարք հետևությունների⁸: Նրա կարծիքով, երբ լեզվական միջոցներով փորձարկվողի հայացքը ուղղվում է դեպի համապատասխան առարկան, ամենից առաջ տեղի է ունենում խոսքային հրահանգի ընկալում և ըմբռնում: Այս դեպքում իրականանում է երկու, միմյանց փոխադարձաբար պայմանավորող գործողություն. ա) առանձին բառ-ազդակների ազդեցությունը երկրորդ ազդարարային համակարգի լսողական կենտրոնների վրա, բ) կոմպլեքս ազդակների (մեր պատկերացմամբ՝ խոսքային հրահանգի ամբողջությունը կազմող առանձին բառերի) փոխազդեցության յուրահատուկ ձևի միջոցով ամբողջ դարձվածքի՝ նախադասության ընկալում:

Այստեղ կարող ենք ավելացնել հետևյալը. եթե խոսքային հրահանգը մեկ բառ է, ապա կրճատվում է պրոցեսի իրականացման ժամանակահատվածը: Այսպես, օրինակ, պատերազմական գործողությունների ժամանակ լայն տարածում է գտնում «օդ» խոսքային հրահանգը, որն ընկալվում է անմիջականորեն և ընկալողը չի դիմում այլ բառ-կոմպլեքս ազդակների «օգնությանը»: Ինքնին հասկացվում է, որ օդից վտանգ է սպառնում և անհապաղ պետք է տեղափոխվել ապաստարան: Իսկ եթե հրահանգը ծավալուն դարձվածք է կամ բարդ նախադասություն, ապա դրա ըմբռնումն իրականանում է ուղեղի համապատասխան կենտրոններում տվյալ նախադասությունը կազմող բառերի, որպես կոմպլեքս ազդակների, յուրահատուկ փոխազդեցության և փոխադարձ կապի շնորհիվ: «Ձեր առջև դրված նկարի վերևի ձախ անկյունում պատկերված է ծառի ճյուղին նստած թռչուն» բնույթի խոսքային հրահանգի ժամանակ առարկայի ամբողջական բովանդակությունը և նրա աղոտ պատկերը (աներկբա է այն փաստը, որ ընկալվող առարկայի պատկերն ավելի պարզ և ընդգծված դրսևորվում է այն դեպքում, երբ խոսքային հրահանգից հետո ընկալողը հայացքը ուղղել է հրահանգվող առարկային և տեսողական զգայարանի միջոցով ֆիքսել այն) առաջանում են բառի կամ նախադասության ընկալումից հետո: Ե. Բոյկոն նշում է, որ աղոտ տեսանելի պատկերը պայմանականորեն, ենթադրաբար նույնացվում է կանխադաշնակվող պատկերի հետ, որն էլ, իր հերթին, զուգորդվելով արդեն տեսադաշտ ընկած, տեսողական զգայարանի միջոցով ֆիքսված առարկայի հետ, հնարավորություն է տալիս ընկալելու, իմանալու առարկան: Նման գործունեության պրոցեսում առարկայի զգայական պատկերի առաջացումը, որի ընթացքում իրականանում է նաև տվյալ առարկային համապատասխանող բառի բովանդակության ճանաչումը, մեր համոզմամբ, պայմանավորված է.

ա) բառային հրահանգի ընկալումով, բ) տվյալ հրահանգի հետևանքով առաջացող առարկայի աղոտ պատկերի և կանխադաշնակվող, սպասվելիք պատկերի ժամանակավոր նույնացմամբ, գ) պատկերների և բուն առարկայի համեմատությունում, դ) ընկալողի այն հետևություններ, որ նրա առարկայական-զգայական պրակտիկական հանդիպած առարկաները նույնն են և նշանակվում են միևնույն բառով: Այսինքն՝ սուբյեկտը համեմատություն մեջ դնելով նոր և նախկին փորձի ընթացքում առաջացած պատկերները, բացահայտում է իր և հասարակության զգայական փորձի ժամանակ հանդիպած առարկաների նմանությունն ու տարբերությունը, դրանց համապատասխան բառի յուրահատկությունը: Փաս-

⁸ Е. И. Бойко, Механизмы умственной деятельности, М., 1976, с. 70.

տորեն, սուբյեկտն իր առարկայական-զգայական գործունեության ընթացքում, հենվելով մարդկության կուտակած և սերունդներին փոխանցած փորձի վրա, ձգտում է մատերիական աշխարհի առարկաների, կոնկրետ երևույթների և հատկությունների դասակարգված արտացոլմանը: Այս իմաստով էլ մարդու, որպես հասարակական էակի, զգայական ընկալումներն իմաստավորված են, նպատակաուղղված և հասարակական բնույթ են կրում: Այլ կերպ ասած իրերի ու առարկաների զգայական ընկալման պրոցեսը ժամանակակից մարդու մոտ իրականանում է հասարակայնորեն մշակված հասկացությունների սիստեմի՝ հասարակական գործունեության ընթացքում ձեռք բերված նշանակությունների հետ կապված: Խոսելով մարդու աչքի մասին, Կ. Մարքսն ընդգծում է, որ հասարակական մարդու զգացումները այլ են, քան ոչ հասարակական մարդունը: Հինգ արտաքին զգացումների գոյացումը համաշխարհային պատմության արդյունք է: Աչքը դարձել է մարդկային այնպես, ինչպես նրա դիտման, հայեցման օբյեկտը դարձել է հասարակական⁹: Ուստի, մարդու զգայական պատկերների բնույթն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ելնել այն փաստից, որ դրանք հասարակական պրակտիկայի պատմական զարգացման արդյունք են և չեն կարող առանձնացվել մտածողությունից, հետևաբար՝ և լեզվից: Զգայական իմացություն մակարդակում դրսևորվում է նաև կողավորման և վերակողավորման սկզբունքը: Ընդ որում, վերակողավորման պրոցեսը, այսինքն՝ անցումն ալելի բարդ կառուցվածքի և ոչ կոնկրետ բովանդակություն ունեցող լեզվամատյանի կողի, հնարավորություն է տալիս մի կողմից ազատվելու նախկին կողային համակարգի կոնկրետ բովանդակությունից, մյուս կողմից՝ իր մեջ տեղակայում և ընդհանրացնում է զգայական պատկերները, ներկայանում որպես դրանց կրճատ արտահայտությունը: Այդպիսի հատկությամբ օժտված կողային սիստեմը՝ լեզուն, իր բառապաշարում ամենից առաջ պահպանում և փոխանցում է մարդու ճանաչողական գործունեության ընդհանրացված արդյունքները, այսինքն՝ կատեգորիաներն ու հասկացությունները: Սակայն մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք երբեք մաքուր ձևով հանդես չեն գալիս, այլ հագեցված են զգայական և հուզական բովանդակությամբ և հաճախ իրենք իսկ դրսևորվում են որպես ամբողջական հոգեկան գործունեության բարդ սպեկտրի մի պահը միայն¹⁰: Հետևաբար, լեզվական գործունեության ընթացքում վերակենդանանում են վաղօրոք առաջացած զգայական պատկերները և նշանակալից դեր խաղում ոչ միայն լեզվական միավորների ու դրանց համապատասխան առարկաների կապի և համապատասխանության բացահայտման, այլ ընկալողի և հաճախ էլ հաղորդողի վարքի դրսևորման ու կարգավորման պրոցեսում: Այնպես որ բառերի բովանդակության և դրանց համապատասխանող առարկաների բացահայտման, ճանաչման արտասանման-ցուցադրման եղանակը միանգամայն օրինաչափ է և կարելի է համարել ճանաչողության ընդհանուր պրոցեսի առանձնահատկություններից մեկը: Սակայն վերոհիշյալը ամենեին էլ չի նշանակում, թե լեզվական միավորների ու շրջապատող միջավայրի առարկաների կապակցման և, հետևաբար, դրանց բովանդակության բացահայտման միակ միջոցը բառն անմիջականորեն առարկային «կապենելն է»: Ինչպես հայտնի է, մարդկային ողջ գործունեությունը, այդ թվում և իմացականը, կրում է հասարակական, սոցիալական բնույթ: Ընդ որում, դիալեկտիկական մատերիալիզմի իմացության տեսության համաձայն մարդու և իրականության փոխհարաբերության, փոխազդեցության իրականացման կարևորագույն միջոցներից մեկն էլ միջանհատական հաղորդակցումն է բնական լեզվի միջոցով: Այս ընթացքում բառերի բովանդակության յուրացման համար, դրանց և առարկաների, հետևաբար և դրանց զգայական պատկերների անմիջական հանգեցմանը դիմելն ամենեին էլ չի բացառվում: Այս փաստին ա-կանատես կարող ենք լինել երկրաչափության դասավանդման ընթացքում: Այս-

⁹ К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений, М., 1956, с. 592—594.

¹⁰ См. Д. И. Дубровский, Психические явления и мозг, М., 1971, с. 331.

պես, «եռանկյունի» բառի բովանդակության յուրացման և տվյալ բառով նշանակված երկրաչափական ֆիզուրի իմացման նպատակով իրականացվում է բառը առարկային և առարկան բառին «մոտեցնելու» գործողությունը: Վերջինս էլ հիմք է հանդիսանում այն բանի, որ հետագայում այդ ֆիզուրի զգայական պատկերը զուդորդվում, կապակցվում է համապատասխան բառի հետ: Անդրադառնալով այս հարցին, Լ. Վիտգենշտեյնը գտնում է, որ երբեմն անվան՝ բառի նշանակության, բովանդակությունը կարելի է բացատրել արտասանման և տվյալ բառը կրողի, առարկայի անմիջական ցուցադրման միջոցով: Ընդ որում, նրա կարծիքով, առարկայի և համապատասխան բառի նման բնույթի կապը ամենևին էլ միանշանակ չէ: Նրա մեկնաբանությամբ, եթե «խնձոր» բառի նշանակությունը բացատրենք ցուցադրման-արտասանման եղանակով, այսպիսինքն՝ խնձորը ցույց տանք և ասենք սա կոչվում է խնձոր, ապա տվյալ բնորոշումը կարող է մեկնաբանվել որպես «սա կ'որ է», «սա կ'ոչտ է», «սա մեկն է» և այլն¹¹: Անկասկած, արտասանման-ցուցադրման եղանակով բառի նշանակության բացատրման ժամանակ բացառված չէ վերոհիշյալ բնույթի երևույթը: Վերջինս, մեր պատկերացմամբ, ցույց է տալիս, որ ընկալողի մոտ զուգորդվում, կապակցվում են խնձորի արտաքին կողմի և նախկին առարկայական զգայական գործունեության ընթացքում առաջացած այլ առարկայի զգայական պատկերները, այսինքն՝ խնձորի մասին ունեցած զգայությունները և կլորության ու կոշտության հատկությամբ օժտված ուրիշ առարկայի մտապատկերը: Մի խոսքով, Լ. Վիտգենշտեյնի հայեցակետը արժեքավոր և ընդունելի կարելի է համարել այն դեպքում, երբ գործ ունենք երեխայի կողմից բառերի բովանդակության յուրացման սկզբունքի հետ: Բացառված չէ, որ երեխան «խնձոր» ասելով հասկանա մետաղյա կլոր գունդ, ռետինե գնդակ և այլն: Սա, մի կողմից, նշանակում է, որ երեխան նույնպես, ինչ-որ չափով, օժտված է ընդհանրացման կարողությամբ, մյուս կողմից՝ նրա համար հավասարազոր են «խնձոր» բառը և նյութական խնձորի արտաքին, ոչ էական զգայորեն ընկալելի կլորության հատկանիշը: Այստեղ կարևորն այն է, որ տվյալ բառի նշանակությունը կապվում, ուղեկցվում է ակնառու-զգայական պատկերի, խնձորի հատկություններից մեկի՝ կլորության զգայական պատկերի հետ: Ինչ վերաբերվում է տարբեր լեզուներով խոսող անձանց, ապա անհեթեթություն կլինի կարծել, թե գերմանացին արտասանման-ցուցադրման եղանակով իմանալով, որ «խնձոր» նշանակում է «die Apfel», հաջորդ անգամ լսելով «խնձոր» բառը կհասկանա խընձորանման այլ բան: Գերմանացու համար անձանալելի է եղել ոչ թե իրական խնձորը, այլ «խնձոր» հայերեն բառը: Նշենք նաև, որ նրա յուրացրած «խնձոր» հայերեն բառը, երկրորդ անգամ լսելիս (առարկայի բացակայության դեպքում) կարող է առաջացնել նաև կոնկրետ խնձորի զգայական պատկեր: Այսինքն, անկախ այն բանից, հասկանալի է, ծանոթ է տվյալ բառի նշանակությունը ընկալողին, թե ոչ, նրա մոտ նախ պետք է առաջանա տվյալ բառի լսողական պատկերը: Ընդ որում, ուղեղի համապատասխան կենտրոնների վերաբերյալ լաբորատոր փորձերի արդյունքները ցույց են տալիս, որ եթե հաղորդվող բառի նշանակությունը ընկալողի համար ծանոթ է, ապա ուղեղի համապատասխան կենտրոնում առաջացող կողմ ավելի կարճ է գոյատևում, քան այն դեպքում, երբ բառի նշանակությունը ծանոթ չէ: Ն. Բեխտերեան գրում է. «Բառի աղուստիկ կողմը շատ շուտ չքանում է», իսկ եթե բառի նշանակությունը հայտնի չէ «այն (կողմը) — է. Այդպես շուտ չի հանգչում, պահպանվում է վայրկյաններ, երբեմն էլ՝ րոպաներ»¹²: Հետևաբար, հայերենին չտիրապետող գերմանացու մոտ «խնձոր» բառ-ազդակի ընկալման ժամանակ անհրաժեշտորեն առաջանում է տվյալ բառի լսողական պատկերը, իսկ վաղօրոք ունեցած զգայական և տվյալ բառի նշանակությանը համապատասխանող պատկերները չեն առաջանա: Այ-

¹¹ М. С. Козлова, Философия языка, М., 1972, с. 165.

¹² Н. Бехтерева, Новое в изучении мозга человека («Коммунист», 1975, № 13, с. 91).

սինքն՝ ուղեղի համապատասխան ներոնների ակտիվացում տեղի չի ունենա, որովհետև ոչ միայն չեն զուգորդվում նախկին և ներկա ազդեցությունների հետևանքով առաջացած պատկերները, այլև ընկալողի համար հասկանալի չէ. նա չի ճանաչել խնձոր նյութական առարկայի և «խնձոր» հայերեն բառ-ազդակի միջև առկա կապն ու հարաբերությունը, դրանց համապատասխանությունը:

Այսպիսով, լեզվական գործունեության բավարար մակարդակն ամենից առաջ պայմանավորված է հաղորդողի և ընկալողի մոտ տվյալ բառի լսողական պատկերի առաջացմամբ: Հիշյալ պրոցեսը մշտապես ուղեկցվում է ուղեղում համապատասխան կողի առաջացմամբ: Այլ խոսքով, բառի ընկալման ժամանակ անկախ այն բանից, ծանոթ է արդյոք տվյալ բառի նշանակությունը, թե՞ ոչ, նախ առաջանում է նրա լսողական պատկերը, հետևաբար և կողը, հետո միայն վերարտադրված նշանակության՝ բառի ներքին կողմի պատկերը և կողը: Այս գործողության հետ միասին տեղի է ունենում նաև ուղեղի տեսողական, զնոստիկական ներոնների ակտիվացում, որոնցում կոդավորված է տվյալ բառով նշանակված առարկայի արտաքին պատկերը: Այսինքն, բառ-ազդակը լսութանում է տվյալ բառին համապատասխան առարկայի տեսողական պատկերների առաջացման, վերափոխման համար: Փաստորեն, լեզվական գործունեության ժամանակ կարող են առաջանալ տարբեր տեսակի պատկերներ: Տվյալ դեպքում կարևորն այն է, որ առաջանում է և՛ բառի արտաքին, լսողական, և՛ այդ բառով նշանակված առարկայի արտաքին, տեսողական պատկերը: Այստեղից էլ մեր այն եզրակացությունը, որ խոսքամային եղանակով բառի նշանակության և համապատասխան առարկայի ճանաչման ժամանակ, մղումն առարկային իրականանում է առարկայական, բառ-առարկա ազդակների հետևանքով առաջացած և ուղեղի համապատասխան մասերում կոդավորված ու ներկա բառ-ազդակի հետևանքով առաջացած պատկերների համատեղ գործունեության շնորհիվ: Այսպիսով, բառերի ընկալման ժամանակ կարևոր դեր են խաղում այդ բառի և դրանով նշանակված առարկաների ղգայական պատկերը: Ահա թե ինչու միանգամայն տրամաբանական է, որ «...զգայել և մտածել նշանակում է գործառել որևէ մի՝ թեկուզև ոչ լրիվ կերպով սահմանված և ոչ լիովին պարզված, բայց արդեն, համենայն դեպս, այս կամ այն կերպ նշանակված առարկաներով»¹³, Հետևաբար, ղգայական պատկերների անվանումը, նշանակումը, դրանց դուրևորումը լեզվամտային գործունեության մեջ մեծ շահով նպաստում են առարկաների և իրերի, ինչպես նաև իրենց իսկ բառերի ընկալմանն ու յուրացմանը:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРОЯВЛЕНИЯ ЧУВСТВЕННЫХ ОБРАЗОВ ПРИ ВОСПРИЯТИИ СЛОВ

ЭДУАРД АЛАВЕРДЯН

Резюме

В процессе языковой деятельности может возникнуть чувственный образ не только самого слова, но и какого-либо предмета из класса ему соответствующих. Если содержание слова усваивается с помощью показа предмета (при его сопровождении звукокомплексом), то у реципиента прежде всего появляется нерасчлененный чувственный образ слова и соответствующего ему в данном случае предмета. Между тем в процессе чисто речемыслительной деятельности возникают слуховые образы слов и абстрактные образы предметов. При выявлении существующих связей и отношений между абстрактными образами и предметами немаловажную роль играют и те чувственные образы, которые возникли в прежнем опыте субъекта и получили свои наименования.

¹³ А. Ф. Лосев, Проблема символа и реалистическое искусство, М., 1976, с. 87—88.